ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀ

Հայաստանի Հանրապետություն 0012, ք. Երևան, Վ.Վաղարշյան 13՝՝, հեռ.՝ (011) 90 00 01

№ 18-3200գ-22
«15» 04 2022թ.

Հայաստանի Հանրապետության
ոստիկանության պետ,
ոստիկանության գեներալ-մայոր
Վահե Ղազարյանին

Հարգելի՛ պարոն Ղազարյան

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի բոլոր աշխատակիցների և անձամբ իմ անունից ջերմորեն շնորհավորում եմ Ձեզ և ՀՀ ոստիկանության ողջ անձնակազմին մասնագիտական տոնի՝ Ոստիկանության օրվա առթիվ:

Ոստիկանը մշտապես հանրային անվտանգության ապահովման առաջնագծում է, հասարակության կողքին և նրա տեսադաշտում: Այս տեսանկյունից ոստիկանության ծառայողն առավել մեծ պատասխանատվություն է կրում մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանության, հասարակական կարգի պահպանության գործում: Այսօր ոստիկանի ծառայությունը մասնագիտական պրոֆեսիոնալիզմից բացի ենթադրում է նաև սրտացավություն և դիմացինին անձնվիրաբար օգնելու պատրաստակամություն, ինչի շնորհիվ մեր երկրում օրեցօր բարձրանում է նրա նկատմամբ հանրային վստահությունը:

Անուրանալի է նաև ոստիկանների կողմից տարվող ամենօրյա բարդ աշխատանքը հանցավորության դեմ պայքարի, այդ թվում՝ կոռուպցիոն դրսևորումներին հակազդելու ուղղությամբ: Վստահ եմ, որ հատկապես այդ ոլորտում ՀՀ ոստիկանության և ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի միջև համագործակցությունը ոչ միայն շարունակական բնույթ կկրի, այլև կդառնա ավելի սերտ ու արդյունավետ:

Լիահույս եմ, որ ոստիկանությունն այսուհետ ևս կշարունակի նույն նվիրումով իրականացնել իր պատասխանատու առաքելությունը՝ նպաստելով պետության կայունության ապահովմանն ու իրավակարգի ամրապնդմանը:

Կրկին շնորհավորելով՝ մաղթում եմ կամք, ուժ, վճռականություն և բարի ծառայություն:

Հարգանքով՝

Արդարադատության երրորդ դասի
պետական խորհրդական *Սասուն Խաչատրյան*